

եղբարց, Տէր Երջանիկ հռետորիդ հոգւոյս ծնող վերերջանկացն Գրիգորի Կեսարացոյ. ընկալ ողջոյն հոգեւոր որդւոյ քո նուաստ Մովսէսէ բանի սպասաւոր:

Եւ զղիարդն քո ի սուրբ յաղօթս քո ապաստան եւ զիս առցես արժանի մասին յիշման:

Ծանուցումն լիցի սրբութեանդ կարճ ի կարճոյ, հայր իմ հոգեւոր, որ զքո հրամանուցդ գրեալ նամակներն վասն Աստուծոյ օրինացն եւ սուրբ հարցն կանոնաց Ասլանն⁶ երեր առ մեզ ի յԱնապատն աւգոստոսի Իէ: Ընթերցաք առաջի գլխաւոր կրանաւորացն, ոչ եթէ սակաւ եղեւ ողբումն, այլ իրրեւ դառուն հեղուին արտաւար: Եւ ապա սուրբ Խաչին տօնին⁷ նաւակատիս եղեւ նորակերտ եկեղեցւոյ, զոր շինեալ է բարեպաշտ եւ աստուածասէր յիշխանն Հայկադ⁸ ի իւր սեփական գիւղն. յերկրայժողով եղեւ. ամենեքեան ժողովեցանք՝ Պօղոս վարդապետ⁹ եւ

⁶ Անշուշտ սա այն Ասլան դպիրն է, որ 1611ին օրինակած է ի Կոստանդնուպոլիս ի խնդրոյ Յակոբ Քէօթահեացի եպիսկոպոսի Կանոնագիրք մը «առ ոտս Գրիգոր Կեսարացի պատրիարքի»։ Յիշատակարանս ուղարկած է ինձ Բարդէն եպ. (այժմ կաթողիկոս) Կիւլէսէրեան 1908ին։ Նոյն Ասլան դպիրի գրչէն է նաեւ Վիեննայի Մխիթ., Թ. 386 (հմտ. Տաշեան՝ Տուցակ, էջ 840)։

⁷ 10 Սեպտ. 1615:

⁸ Հոս խօսքը հաւանօրէն Հօշանց անապատի մասին է։ Մեղիք Հայկադնի մասին տես ընդարձակ § 24:

⁹ Պօղոս Վ. Մովկացի, որ եռանդուն առաքելական գործունէութիւն ունեցաւ, եղաւ գլխաւոր նեցուկն եւ աշխատակիցը Մովսէս վարդապետին եւ